

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ֆիլմի արտադրության փուլի վերաբերյալ

ԴՊ.

ք. Երևան

«.....» 2021թ.

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կինոկենտրոն), ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Շուշանիկ Ժիրայրի Միրզախանյանի, որը գործում է Կինոկենտրոնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «.....» (այսուհետ՝ Կինոարտադրող), ի դեմս տնօրենիի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագայում միասին անվանվելով «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ», հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի միջևթ. կնքված թիվ ՄՇՄԴրամաշնորհի տրամադրման պայմանագիրը (այսուհետ՝ «Դրամաշնորհի պայմանագիր»), կնքեցին սույն Ֆիլմի արտադրության վերաբերյալ պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿՄԱ

- 1.1 Պայմանագրի դրույթների համաձայն՝ Կինոարտադրողը պարտավորվում է Պայմանագրի 2.3 կետով և իր կանոնադրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել «.....» պայմանական վերնագրով խաղարկային վավերագրական լիամետրաժ կինոնկարի (այսուհետ՝ Ֆիլմ) արտադրության փուլի աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների:
- 1.2 Աշխատանքի արդյունքը Կինոկենտրոնին հանձնվում է երկկողմանի հանձնման-ընդունման ակտի, հաշիվ-ապրանքագրի առկայության հիման վրա, ինչպես նաև հաշվետվությունների տեսքով, որի տակ Կողմերը հասկանում են նախահաշվի հոդվածների համապատասխան կատարված ծախսեր:
- 1.3 Ֆիլմը ստեղծվելու էի գրված սցենարի հիման վրա:
- 1.4 Ֆիլմի Բեմադրող Ռեժիսոր՝, Պրոդյուսեր՝
- 1.5 Ֆիլմի պարամետրներն են՝
 - Ֆիլմի աշխատանքային անվանում՝ «.....»,
 - Ֆիլմի տեսակ՝,
 - Ֆիլմի ժանրը՝,
 - Ֆորմատ՝,
 - Գույն՝
 - Ֆոնոգրամա՝,
 - Օրիգինալ լեզու՝,
 - Մետրաժ՝
- 1.6 Ֆիլմի ընդհանուր բյուջեն կազմում է (.....) ՀՀ դրամ: Պայմանագրի 1.1 կետով սահմանված արտադրության փուլի աշխատանքների իրականացման բյուջեն կազմում է (.....) ՀՀ դրամ՝ համաձայն [հավելված 4](#)-ի:
- 1.7 Ֆիլմի արտադրության փուլի աշխատանքների իրականացման համար Կինոկենտրոնը տրամադրում է (.....) ՀՀ դրամ: Սույն կետով տրամադրվելիք գումարները վճարվում են թիվ ՄՇՄ Դրամաշնորհի Պայմանագրով Կինոկենտրոնին տրամադրված գումարների շրջանակներում՝ խաղարկային կինոնկարների արտադրության համար նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում, որոնք պետք է ծախսվեն Կինոարտադրողի կողմից [Հավելված 1](#)-ով (նախահաշվով), [Հավելված 2](#)-ով (ժամանակացույցով) և [Հավելված 5](#)-ով սահմանված կարգով:
- 1.8 Ֆիլմի արտադրության փուլի աշխատանքների իրականացման համար Կինոարտադրողը

տրամադրում է (.....) ՀՀ դրամ, ներառյալ հնարավոր համարտադրողների գումարները:

- 1.9 Արտադրության փուլում հետարտադրական փուլի համար նախատեսված 10 /տաս/ միլիոն ՀՀ դրամ ֆինանսավորումը կտրամադրվի միայն սևագիր մոնտաժ (Ռաֆկատ) տարբերակով Ֆիլմը Կինոկենտրոնին հանձնելու դեպքում:
- 1.10 Ֆիլմի արտադրության աշխատանքների կատարման սկիզբ է համարվումթ., ավարտը՝թ.: Կինոարտադրողն իրավունք ունի Ֆիլմի արտադրության աշխատանքները՝ իր կողմից կատարվելիք ներդրումների մասով, սկսել ավելի վաղ ժամկետում՝ ներկայացնելով դրանք հավաստող և Պայմանագրով նախատեսված բոլոր փաստաթղթերը:
- 1.11 Պայմանագրով Կինոկենտրոնի և Կինոարտադրողի պարտավորությունների ժամկետը սահմանվում է՝ Պայմանագրի կնքման պահից մինչև Կինոարտադրողի կողմից Կինոկենտրոնի հանդեպ ստանձնած բոլոր պարտավորությունների կատարումը:
- 1.12 Ի լրումն Պայմանագրի կետերի, Ֆիլմի արտադրությանը Կողմերը աջակցում են նաև իրենց մասնագիտական գիտելիքներով, ունակություններով ու հմտություններով, ինչպես նաև գործարար համբավով և կապերով:

2 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Կինոկենտրոնն իրավունք ունի՝

- 2.1.1 Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների ստուգել Կինոարտադրողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը և որակը, Կինոկենտրոնի փորձագետների մասնակցությամբ իրականացնել վերահսկողություն նկարահանման աշխատանքների նկատմամբ, առանց միջամտելու Կինոարտադրողի կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի):
- 2.1.2 Կինոարտադրողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկույթ Պայմանագրի կատարման ընթացքի մասին:
- 2.1.3 Կինոարտադրողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ կարգով կատարված աշխատանքները:
- 2.1.4 Վերահսկել Կինոարտադրողի կողմից Պայմանագրի 1.6 կետում նշված գումարների նպատակային օգտագործումը՝ Կողմերի միջև հաստատված նախահաշվի /[Հավելված 1/](#) և /[Հավելված 2-ի/ համաձայն:](#)
- 2.1.5 Կինոարտադրողի կողմից 2.3.1 – 2.3.20 կետերով ստանձնած իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու կամ չկատարելու դեպքում, միակողմանի վերանայել և ժամանակավորապես կասեցնել կամ դադարեցնել Պայմանագրի գործողությունը (լուծել Պայմանագիրը): Նման դեպքում, Կինոարտադրողն իրավունք չունի ներկայացնել Կինոկենտրոնին այդպիսի կասեցումից իր համար առաջացած ցանկացած տեսակի վնասների հատուցման պահանջ:
- 2.1.6 Օգտագործել Պայմանագրի 2.3.16 կետով սահմանված ֆոտո և տեսանյութեր իր բացառիկ հայեցողությամբ, Ֆիլմի գովազդային, արխիվային և այլ նպատակներով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 2.1.7 Հիմք ընդունելով Դրամաշնորհի պայմանագրի 7.1 կետը՝ օգտվել Պայմանագրի 2.2.1 – 2.2.21 կետերով նշված իրավունքներից՝ համաձայնեցնելով Կինոարտադրողի հետ:
- 2.1.8 Անհրաժեշտության դեպքում կազմակերպել Կինոարտադրողի մոտ աուդիտ՝ Կինոկենտրոնի կողմից տրամադրված գումարների ծախսման մասով:
- 2.1.9 Կինոարտադրողի համաձայնությամբ, ցանկացած մշակութային միջոցառման ժամանակ, համաշխարհային պրեմիերայից հետո օգտագործել Ֆիլմը ոչ կոմերցիոն նպատակներով:

2.2 Կինոարտադրողն իրավունք ունի.

- 2.2.1 պատրաստել Ֆիլմի կրկնօրինակները ցանկացած նյութական կրիչի վրա,
- 2.2.2 իրականացնել Ֆիլմի բնօրինակի կամ կրկնօրինակների տարածումը, ներառյալ վերջիններիս բազմացման նպատակով,

- 2.2.3 Ֆիլմը վերամշակել (ռեստավրացիա, գունային կորրեկցիա),
- 2.2.4 Իրականացնել Ֆիլմի հրապարակային ցուցադրում,
- 2.2.5 Իրականացնել Ֆիլմի հանրային ցուցադրում և կատարում,
- 2.2.6 Իրականացնել Ֆիլմի բնօրինակի և կրկնօրինակների վարձույթ,
- 2.2.7 Իրականացնել Ֆիլմի ցանկացած լեզվով թարգմանություն, սուբտիտրավորում,
- 2.2.8 Իրականացնել Ֆիլմի հասարակական ցուցադրում, որի տակ Կողմերը հասկանում են ցուցադրում հեռուստատեսությամբ, ինչպես նաև ռենտրանսյացիայի միջոցով, անհատույց թե հատուցելի կարգով, ներառյալ անհատական Պայմանագրերով,
- 2.2.9 Իրականացնել Ֆիլմի կաբելային ցուցադրում, որի տակ կողմերը հասկանում են համընդհանուր ցուցադրում հեռուստատեսության միջոցով, կաբելի, օպտիկական մալուխային և նմանատիպ այլ ձևերով, անհատույց թե հատուցելի կարգով, ներառյալ անհատական Պայմանագրերով,
- 2.2.10 Իրականացնել Ֆիլմի հասանելիության ապահովումը հասարակությանը տարբեր ձևերով, ներառյալ այն դեպքերի, երբ ցանկացած անձ ցանկացած վայրից հնարավորություն ունենա դիտել այն, ինչպես նաև Ինտերնետի միջոցով,
- 2.2.11 Իրականացնել Ֆիլմի թարգմանություն, դուբլյաժ, սուբտիտրավորում ցանկացած լեզվով, ցանկացած տեսակի վերափոխում և վերափոխման արդյունքում ցանկացած ձևով օգտագործում,
- 2.2.12 Իրականացնել Ֆիլմի վիզուալ մասի օգտագործում, որի տակ Կողմերը հասկանում են Ֆիլմի այն մասը, որը օգտագործվում է Ֆիլմի երաժշտական մասին անջատ՝ ցանկացած ձևով և ցանկացած միջոցների օգնությամբ,
- 2.2.13 Իրականացնել Ֆիլմի երաժշտական մասի օգտագործում, որի տակ Կողմերը հասկանում են Ֆիլմի այն մասը, որը օգտագործվում է Ֆիլմի վիզուալ մասից անջատ՝ ցանկացած ձևով և ցանկացած միջոցների օգնությամբ,
- 2.2.14 Ֆիլմի սցենարի հիման վրա ստեղծված աուդիովիզուալ ստեղծագործությունների բեմադրություն “ռիմեյք”, օգտագործելով նույն թեման, դերասաններին, երկխոսությունները և այլ էական տարրերը,
- 2.2.15 Իրականացնել Ֆիլմի դերասանների, երկխոսությունների օգտագործմամբ այլ աուդիովիզուալ ստեղծագործությունների բեմադրությունը, որոնք հանդիսանում են որպես Ֆիլմի սցենարի շարունակություն՝ սիքուել (sequel),
- 2.2.16 Ֆիլմը օգտագործել ցանկացած տեսակի ապրանքների պատրաստման հարցում, ներառյալ էլեկտրոնային և այլ տեսակի խաղալիքների, հագուստի պարագաների, տպագրական նյութերի, սննդամթերքի, ինչպես նաև ծառայությունների մատուցման բնագավառում (օրինակ ժամանցի կենտրոններում “մերչնդայզինգ”),
- 2.2.17 Իրականացնել համատեղ օգտագործում աուդիո և վիդեո ձայնագրությունների, լուսանկարների և այլ ձայնային տարրերի, ինչպես նաև ծրագրային ապահովման այլ հնարավորությունների հետ մեկտեղ, որոնք հնարավորություն են տալիս ինտերակտիվ շփում,
- 2.2.18 Ֆիլմի դրվագներն օգտագործել գովազդային տեսահոլովակների և այլ տեսակի գովազդների պատրաստման համար:
- 2.2.19 Բանակցություններ վարել և Պայմանագրեր ստորագրել այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ Ֆիլմը տարածելու, ինչպես նաև կոմերցիոն նպատակներով բոլոր լեզուներով օգտագործելու համար, վերջիններիս փոխանցել Ֆիլմի նկատմամբ Կինոարտադրողին պատկանող իրավունքները կամ դրանց մի մասը՝ պահպանելով Պայմանագրի 3-րդ մասով սահմանված կարգը: Ընդ որում, սույն կետի կիրառման մասով երրորդ անձի հետ կնքված Պայմանագիրը չպետք է պարունակի որևէ դրույթ, որով կսահմանափակվի Կինոկենտրոնի Պայմանագրով նշված ցանկացած իրավունքները և ակնկալիքները, մասնավորապես Պայմանագրի 3-րդ մասով կարգը: Բոլոր դեպքերում, նման կետի առկայության դեպքում, Պայմանագրի Կողմերը դիտարկում են Պայմանագրի կետերը գերիշխող այլ Պայմանագրերի նկատմամբ:
- 2.2.20 Տեղեկացնել Կինոկենտրոնին կինոփառատոններին (ներառյալ հայաստանյան կինոփառատոններին) Ֆիլմի մասնակցության մասին,

2.2.21 Ֆիլմից կադրեր օգտագործել տպագրական աշխատանքներում:

2.3 Կինոարտադրողը պարտավորվում է՝

2.3.1 Համաձայն Պայմանագրի դրույթների, պահպանել Ֆիլմի արտադրության աշխատանքներն ավարտին հասցնելու համար նախատեսված ժամկետները:

2.3.2 Ժամանակին, պատշաճ կարգով իրականացնել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված Ֆիլմի արտադրության փուլի աշխատանքները, դրանց հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և իրավական այլ ակտերի համաձայն:

2.3.3 Ստեղծել ներկայացված սցենարին համապատասխան Ֆիլմ: Համապատասխանության տակ Կողմերն ընդունում են, որ այն չպետք է տարբերվի ներկայացված սցենարից, որը ներկայացվել է համաձայն Կինոնկարների նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման» Կանոնակարգի դրույթների:

2.3.4 Կինոկենտրոնին գրավոր տեղյակ պահել Ֆիլմի արտադրության ժամանակ տեղի ունեցած արտակարգ դեպքերի (արտակարգ դրության ազդեցություն), ինչպես նաև Ֆիլմի արտադրության ընթացքի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքների մասին՝ հանգամանքը (դեպքը) վրա հասնելու պահից սկսած 3 /երեք/ օրվա ընթացքում,

2.3.5 Պայմանագիրն ստորագրելու հետ մեկտեղ ներկայացնել Պայմանագրի 1.7 և 1.8 կետերում նշված գումարների նախահաշիվը՝ ստորագրված իրավասու անձանց կողմից, իսկ ֆինանսավորման գրաֆիկը, աշխատանքների կատարման ժամանակացույցը և հաստատված Կինոարտադրողի կողմից կցվելու են Պայմանագրին որպես հավելվածներ և հանդիսանալու են Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3.6 Կինոկենտրոնի պահանջով պարբերաբար դիտման համար տրամադրել նկարահանված նյութերը, մոնտաժված Ֆիլմը (աշխատանքային տարբերակը),

2.3.7 Ֆիլմի արտադրության, գովազդման, և վարձույթի հետ կապված գովազդատեղեկատվական բոլոր նյութերում նշել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ զինանշանով և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ին՝ լոգոյով:

2.3.8 Պայմանագրեր կնքել Ֆիլմի ստեղծագործական անձնակազմի հետ, որոնք պետք է պարտադիր կարգով բովանդակեն դրույթները, համաձայն որի Ֆիլմի նկատմամբ բոլոր բացառիկ գույքային, հեղինակային իրավունքները, որը նախատեսված է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով, հանդիսանում է Կինոարտադրողի սեփականությունը, մասնավորապես, պետք է նշված լինի, որ հեղինակները փոխանցում են Կինոարտադրողին հետևյալ գույքային բացառիկ իրավունքները, մասնավորապես.

- Ֆիլմի վերարտադրության (բոլոր տեսակի կրիչների վրա),
- Տարածման,
- Արտահանման,
- Հրապարակային ցուցադրման,
- Հրապարակային կատարման,
- Եթեր հեռարձակելու, ինչպես նաև կաբելով, հաղորդալարերով և համանման այլ միջոցներով՝ համընդհանուր իրազեկման համար,
- Ցանկացած լեզվով թարգմանության, կրկնօրինակման և/կամ տողագրման,
- Ցանկացած լեզվով այլ հրապարակային հաղորդման,
- Վերամշակման նկատմամբ,

Սույն կետի իմաստով ադմինիստրատիվ և ստեղծագործական անձնակազմ ասելով, Կողմերը հասկանում են այն աշխատող անձնակազմը, որը աշխատում է Ֆիլմի արտադրության ընթացքում:

2.3.9 Կինոկենտրոնին տեղեկացնել Ֆիլմը հայաստանյան և միջազգային կինոփառատոնների մասնակցելու, ինչպես նաև մրցանակների և պարգևների հայցման առաջադրելու մասին,

2.3.10 Ֆիլմի արտադրությունն իրականացնել Պայմանագրով նախատեսված ծավալով և ժամկետներում,

2.3.11 Ներկայացնել բովանդակային հաշվետվություն՝ ներառյալ ամբողջական տեղեկատվություն աշխատանքների իրականացման և ընթացքի մասին (նկարահանման ընթացքի լուսանկարներ,

նյութեր և այլն):

- 2.3.12 Ներկայացնել Կինոկենտրոնին այլ համատեղ ֆիլմարտադրող կինոկազմակերպությունների հետ կնքված Պայմանագրերի և/կամ այլ Պայմանագրերի այն պատճենները (առկայության դեպքում), որոնցով հավաստիացվում և երաշխավորվում է Կինոարտադրողի կողմից Պայմանագրի 1.8 կետով ստանձնած պարտավորությունների կատարումը: Նման պայմանագրերում առևտրային կամ այլ գաղտնիք պարունակելու դեպքում՝ ներկայացնել քաղվածք Պայմանագրի 1.8 կետով ստանձնած պարտավորությունների կատարման մասին՝ հաստատված նման պայմանագրի բոլոր կողմերի կողմից կամ ներկայացնել պատշաճ ձևի բանկային փոխանցման փաստաթղթերը /կամ պատճենները/:
- 2.3.13 Ֆիլմի արտադրության ավարտից հետո հանձնել Կինոկենտրոնին Ֆիլմի վերջնական տարբերակը՝ DCP և MP4 (նվազագույնը 1920x1080) ֆորմատներով ֆայլերը, որի վերաբերյալ Կողմերը ստորագրում են հանձնման-ընդունման ակտ:
- 2.3.14 Կինոկենտրոնի պահանջով ներկայացնել վերջինիս Պայմանագրի կատարմանը վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:
- 2.3.15 Պայմանագրի գործողության ընթացքում մինչև փաստացի ծախսերի իրականացումը Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների 10 տոկոսը գերազանցող գումարների փոփոխությունների կամ նոր ծախսային ուղղության անհրաժեշտություն առաջանալու դեպքում, նախապես՝ մինչ փաստացի ծախսերի կատարումը՝ առնվազն 10 օր առաջ գրավոր կարգով համաձայնեցնել այն Կինոկենտրոնի հետ: Հակառակ դեպքում ֆինանսական հաշվետվությունը համարվում է թերի, որի պարագայում հետագա ֆինանսավորումը Կինոկենտրոնի կողմից չի իրականացվի: Աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև-ը:
- 2.3.16 Ֆիլմի նկարահանման ընթացքում պարբերաբար տրամադրել Կինոկենտրոնին բարձր որակի ֆոտո կադրեր և տեսանյութեր՝ Ֆիլմի նկարահանման տարբեր վայրերից Ֆիլմի աշխատանքային իրավիճակների վերաբերյալ:
- 2.3.17 Կինոկենտրոնին Պայմանագրի 1.7 կետում նշված գումարների ծախսման վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Պայմանագրի Հավելված 1 և 2-ով նախատեսված աշխատանքների ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամփոփ ֆինանսական հաշվետվություն Կինոկենտրոնի կողմից տրամադրված և Կինոարտադրողի կողմից ներդրված գումարների ծախսման մասով, ինչպես նաև ամփոփ ֆինանսական հաշվետվության համապատասխան ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթեր, ինչպես նաև DVD կրիչով սևագիր մոնտաժված նյութը (Ֆիլմը), որի հանձնումը Կինոկենտրոնին արձանագրվում է երկկողմանի ստորագրված ակտերով:
- 2.3.18 Մինչև Ֆիլմերի հրապարակային ցուցադրումը (առաջին ցուցադրություն, մշակույթային միջոցառումներ, վարձույթ), արտերկրներում հայկական կինոյի օրերին, միջազգային կինոփառատոններին, կինոշուկաներին Ֆիլմի մասնակցելուց առաջ Կինոկենտրոնին տրամադրել ավարտված Ֆիլմի թվային կրիչի մեկական օրինակ (պաշտպանիչ շերտով պատճեն) և ապահովել Ֆիլմի փակ դիտումը Հայաստանի Հանրապետության տարածքում՝ գեղարվեստական կամ մասնագիտական խորհրդի և Կինոկենտրոնի ներկայացուցիչների պարտադիր ներկայությամբ:
- 2.3.19 Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պրոդյուսերական ընկերությունը պատասխանատվություն է կրում իր կողմից 2.3.11 կետում նշված Հաշվետվություններով ներկայացված տվյալների հավաստիության համար:
- 2.3.20 Կինոկենտրոնին տրամադրել՝ օտարերկրյա պետություններում հայկական կինոյի օրերին, շաբաթներին, միջազգային կինոփառատոններին, կինոշուկաներին ներկայացվող Ֆիլմի մասնակցության և արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն:

2.4 Կինոկենտրոնը պարտավորվում է՝

- 2.4.1 կատարել Պայմանագրի 1.7 կետում նշված գումարի տրամադրումը հետևյալ կարգով՝

- Նախահաշվային գնի 90 %-ը վճարվում է Կողմերի միջև հաստատված [/հավելված 2/](#) ժամանակացույցի համաձայն:
 - Նախահաշվային գնի 10% վճարվում է Կինոարտադրողին վերջինիս կողմից Պայմանագրի 2.3.11, 2.3.17, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող պատշաճ կարգով լրացված և վավերացված [Հավելված 3](#) ներկայացնելուց և համապատասխան հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:
- 2.4.2 Պայմանագրի առարկայի վերաբերյալ առանց Կինոարտադրողի նախնական գրավոր համաձայնության որևէ մեկի հետ չկնքել ոչ մի համաձայնագիր:

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 3.1 Կողմերը պայմանավորվում են, որ Ֆիլմի տարածման, ցուցադրության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ եղանակով օգտագործման արդյունքում Կինոարտադրողի կողմից ստացված եկամտից (այսուհետ՝ Եկամուտ) Կինոարտադրողը Կինոկենտրոնին պետք է վճարի Եկամտի (.....) տոկոսը՝ մինչև Պայմանագրի 1.7 կետում նշված և Կինոկենտրոնի կողմից տրամադրված ամբողջ գումարի վերադարձը:
- 3.2 Բոլոր դեպքերում, Ֆիլմի ցանկացած տեսքով օգտագործելու արդյունքում տոկոսների բաշխման ժամանակ պահպանվում է Կինոկենտրոնի 3.1 կետում նշված տոկոսի չափը՝ անկախ Կինոարտադրողի կողմից Պայմանագրի 2.2.19 կետում նշված իրավունքները կիրառելու և Պայմանագրեր ստորագրելու արդյունքում Կինոարտադրողին հասանելիք տոկոսի չափից: Կինոարտադրողի համաձայնությամբ Կինոկենտրոնը ազատ է բանակցություններ վարելու ֆիլմի տարածման և շահագործման վերաբերյալ:
- 3.3 Ղեկավարվելով Պայմանագրի 2.1.5 կետի դրույթներով, Պայմանագրի 1.9 կետում նշված ժամկետի ավարտից հետո, Կողմերն իրավունք ունեն պահանջել միմյանցից Պայմանագրի 1.6, 1.7 և 1.8 կետերով նախատեսված գումարային ներդրումների չափին համամասնորեն ապացույցներ (հաշվապահական ձևակերպումների, բանկային փոխանցումների տեսքով): Դրանցում առևտրային կամ այլ գաղտնիք պարունակելու պատճառաբանությամբ Կինոկենտրոնին նման փաստաթղթեր չտրամադրելու կամ կիսատ տրամադրելու դեպքում համարվում է Կինոարտադրողի կողմից ներդրումների վերաբերյալ ապացույցներ չներկայացված): Նշված ապացույցները ուսումնասիրելուց հետո նոր գնահատվում է յուրաքանչյուր Կողմի կողմից կատարված փաստացի ներդրումը, որի արդյունքում Կողմերին հասանելիք տոկոսի չափերը կարող են փոխվել:
- 3.4 Կինոարտադրողի կողմից Կինոկենտրոնի նկատմամբ Պայմանագրով ստանձնած բոլոր տեսակի պարտավորությունները կատարելուց հետո, անհրաժեշտ ակտերը ստորագրելուց հետո, Կողմերը պարտավոր են ստորագրեն վերջնական ակտ, որը կսահմանի բոլոր տեսակի պարտավորությունների կատարումը Կինոկենտրոնի հանդեպ:
- 3.5 Կողմերը սույնով հավաստիացնում են, որ չեն իրականացնի Ֆիլմի որևէ ցուցադրություն՝ ի վնաս միմյանց շահերի:
- 3.6 Ֆիլմի համաշխարհային դիստրիբուցիան իրականացնում է Կինոարտադրողը:
- 3.7 Ֆիլմի հետագա տարածումը իրականացվում է Կինոարտադրողի հետ կնքվելիք լրացուցիչ Պայմանագրի հիման վրա:

4. ՀԵՂԻՆԱԿԱՑԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

- 4.1 Պայմանագրով սահմանվում է, որ Ֆիլմի ստեղծագործական անձնակազմի հետ կնքված Պայմանագրերով Ֆիլմի նկատմամբ օգտագործման բացառիկ իրավունքը և այլ Պայմանագրերով սահմանված իրավունքները, միջազգային կոնվենցիաներով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված առավելագույն ժամկետներով փոխանցվում են Կինոարտադրողին ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 4.2 Սույնով Կինոարտադրողը երաշխավորում է, որ պարտավորվում է զերծ պահել Կինոկենտրոնին ապագայում ցանկացած երրորդ անձանց կողմից Կինոկենտրոնի պահանջներին ոսնձգություններ ներկայացնելու դեպքում, որոնք կապված են հեղինակային իրավունքների հետ, կարգավորել բոլոր նմանատիպ տեսակի խնդիրները և տարաձայնությունները լուծել իր հաշվին և իր միջոցներով:
- 4.3 Հիմք ընդունելով Պայմանագրի 4.1 և 4.2 կետերով նախատեսված դրույթները, Կողմերն ընդունում

են, որ Պայմանագրի 1.1 կետում նշված Ֆիլմի (կինոարտադրության) ձեռք բերումը՝ այսինքն Ֆիլմի նկարահանման ողջ արտադրության աշխատանքների իրականացման իրավունքը պատկանում է «..... (Կինոարտադրողին):

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 5.1 Կողմերից յուրաքանչյուրը Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման, ինչպես նաև դրա արդյունքում Ֆիլմի արտադրության աշխատանքների ժամանակավոր (կամ ընդմիջյալ) դադարեցման դեպքում, այդ Կողմը պատասխանատվություն է կրում մյուս Կողմի առջև նման դադարեցման համար, փոխհատուցում է մյուս Կողմի վնասները, ներառյալ բաց թողնված օգուտը:
- 5.2 Կողմերից որևէ մեկն իրավունք չունի մյուսից պահանջել պարտավորությունների կատարում, եթե դրա կատարումը պայմանավորված է իր պարտավորության կատարմամբ:
- 5.3 Պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են տեղի ունենալ միայն Կողմերի համաձայնության դեպքում, որոնք կատարվում են գրավոր կերպով և ստորագրվում են Կողմերի կողմից և հանդիսանալու են Պայմանագրի անբաժանելի մասը:
- 5.4 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.5 Պայմանագրի դադարեցման կամ կասեցման դեպքում Կողմերը պարտավորվում են կատարել Ֆիլմի արտադրության համար նախատեսված Ֆինանսական միջոցների համապատասխան հաշվարկ, որը պետք է կատարվի Կինոարտադրողի կողմից ներկայացված մանրամասն հաշվարկի հիման վրա:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 6.1 Կողմերի միջև ծագած վեճերը կամ տարաձայնությունները Կողմերի միջև լուծվում են բանակցությունների միջոցով, հակառակ դեպքում Կողմերը իրավասու են դիմել դատարան:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱՂԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

- 7.1 Պայմանագիրն ուժի մեջ է Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրի 1.9 կետում նշված ժամկետը: Ամեն դեպքում, Պայմանագրի այլ բաժիններով սահմանված Կողմերի պարտավորությունները գործում են մինչև Կողմերի կողմից իրենց պարտավորությունների ամբողջական կատարումը:
- 7.2 Պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել Կողմերի համաձայնությամբ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 8.1 Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կինոարտադրողը պարտավոր է կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, Կինոկենտրոնին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար Կինոարտադրողը կրում է պատասխանատվություն Կինոկենտրոնին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 8.2 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող Կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:
- 8.3 Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 9.1-ին

կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը:

- 8.4 Պայմանագրով սահմանված ժամկետները Կինոարտադրողի կողմից չպահպանվելու դեպքում վերջինս, վերջինս վճարում է տույժ Պայմանագրի 1.7 կետում նշված գումարի 0,01 (զրո ամբողջ մեկ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:
- 8.5 Պայմանագրով նախատեսված պարտավորությունները (բացառությամբ Պայմանագրի 9.4 կետի) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կինոարտադրողը, վճարում է տուգանք Պայմանագրային գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
- 8.6 Կինոարտադրողը պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված հաշվետվությունների տվյալների հավաստիության համար:
- 8.7 Համարտադրության միջոցով արտադրությունը կազմակերպելու դեպքում համարտադրողի չկատարած պարտավորությունների պատասխանատվությունը կրում է Կինոարտադրողը:

9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

- 9.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
- 9.2 Անհաղթահարելի ուժի հանգամանքներ ասելով հասկացվում են արտաքին արտակարգ իրադարձությունները, քաղաքական ու տնտեսական փոփոխությունները, որոնք անմիջականորեն ազդում են պայմանագրային պարտավորությունների կատարման վրա և տեղի են ունեցել Կողմերի կամքից անկախ (հրդեհներ, երկրաշարժեր, ջրհեղեղներ, համաճարակներ, վթարներ, պայթյուններ, դժբախտ պատահարներ, գործադուլներ, զանգվածային անկարգություններ, քաղաքացիական բնակչության հուզումներ, թշնամական ուժերի գործողություններ, պատերազմ, ինչպես նաև բոլոր մակարդակների իշխանության մարմինների, դատական մարմինների կարգադրություններ):
- 9.3 Նման հանգամանքների մասին դրանց ենթարկված Կողմը պետք է մյուս Կողմին հաղորդի դրանց վրա հասնելու պահից ոչ ուշ, քան 5 (հինգ) օրվա ընթացքում:
- 9.4 Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի կարգով լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս Կողմին:

10. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 10.1 Պայմանագիրը, Կողմերից որևէ մեկի վերակազմավորվելու դեպքում պարտադիր է տվյալ Կողմի իրավահաջորդի համար, որի վերաբերյալ այդ մյուս Կողմին ներկայացնել է համապատասխան իրավաբանական հիմքեր: Պայմանագրի առումով Ֆիլմի արտադրությունը համարվում է ավարտված՝ Ֆիլմը Պայմանագրով սահմանված կարգով և Ֆորմատով Կինոկենտրոնին հանձնելու և երկկողմ ստորագրված ակտի առկայության դեպքում: Ֆիլմը հաստատված ժամկետից ուշ ավարտելու դեպքում, այն պետք է համաձայնեցված և ստորագրված լինի երկկողմ համաձայնագրով, այլապես Ֆիլմի արտադրության փուլի ավարտը համարվում է սկզբնական ավարտման ժամկետը:
- 10.2 Պայմանագրի դրույթները մեկնաբանելիս Կողմերը պետք է ելնեն դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Այդպիսիք պարզ չլինելու դեպքում Պայմանագրի որոշակի դրույթի մեկնաբանությունը որոշվում է՝ Պայմանագրի մյուս պայմանների և Պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:
- 10.3 Կողմերը չպետք է բանակցությունների ընթացքում ստացված Պայմանագրի կնքման և իրականացման, հատկապես՝ Ֆիլմի վրա աշխատելու միջոցների, պլանավորված և իրականացված գործողությունների, այսուհետ՝ “Գաղտնի տեղեկություններ”, վերաբերյալ երրորդ անձանց տեղեկություններ տան: Գաղտնի տեղեկությունների հրապարակման արգելքը գործում է ինչպես Պայմանագրի ուժի մեջ լինելու, այնպես էլ նրա ժամկետանց լինելու կամ դադարացվելու

դեպքում: Կողմերը չեն օգտագործելու տվյալ տեղեկությունները որևէ այլ նպատակներով, բացի Պայմանագրի իրականացման նպատակից: Սույն կետի իմաստով Կողմերից յուրաքանչյուրը կապահովի, որպեսզի իր աշխատակիցները, գործընկերներն ու տվյալ Պայմանագրի իրականացման համար նշանակված այլ անձիք պարտավորված լինեն չբացահայտել «Գաղտնի տեղեկությունները»:

- 10.4 Ցանկացած տեսակի նամակագրություն, նամակ, ծանրոց ուղարկվում է փոստով, պատվիրված նամակով Կողմի՝ Պայմանագրում նշված հասցեին: Սույն կետի իմաստով առաքված է համարվում նաև ստացման և կարդացման հաստատումով Պայմանագրի 12-րդ կետում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված նամակագրությունը:
- 10.5 Պայմանագրի հոդվածների վերնագրերը կրում են օժանդակ բնույթ և չեն կարող օգտագործվել Պայմանագրի պայմանները մեկնաբանելու համար:
- 10.6 Պայմանագրի առանձին դրույթի կամ մասի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս դրույթների կամ մասերի, ինչպես նաև ամբողջ Պայմանագրի անվավերությանը:
- 10.7 Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև կնքված կամ Կողմերի կողմից ներկայացված բոլոր Հավելվածները, արձանագրությունները, հաշվետվությունները, ակտերը, նախահաշիվները և այլ փաստաթղթերը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:
- 10.8 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ :

12. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 3ա,

Փաստացի գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եզնիկ Կողբացի փ, 2.83, բն.4

Գրանցման համար՝ 271.210.02511

Պետական գրանցման վկայական՝ 03Ա058895

ՀՎՀՀ՝ 01203271

Բանկային վավերապայմաններ՝

ՀՀ Ֆինանսների նախարարություն

(Գանձապետական բաժանմունք)

900018001744 (2950) AMD

Հեռ.՝ (+37410) 35-7878

Էլ. Փոստի հասցե՝ kinokentron@gmail.com

Ինտերնետային կայք՝ www.ncca.am

Տնօրենի ժ/պ՝ _____ Շ. Միրզախանյան

Կ.Տ.

ԿԻՆՈԱՐՏԱԴՐՈՂ

.....

Իրավաբանական հասցե՝

Փաստացի գործունեության հասցե՝

Գրանցման համար՝

ՀՎՀՀ՝

Բանկային վավերապայմաններ՝

Հ/Հ՝

Բանկ՝

Հեռ.՝ (.....

Էլ. Փոստի հասցե՝

Ինտերնետային կայք՝

Տնօրենի՝ _____.....

.....

Կ.Տ.